

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԴ ՉՀՊԱՐՏԱՅՆ ԶԵՉ

Ան, որ հարստութեան տէր դառնալէ ետք կը շարունակէ Աստուծոյ վստահիլ փոխանակ իր անձին՝ ան վեհանձն մարդ է, ան առաքինի մարդ է: Այն անձը, որ չառաջնորդուիր հպարտութեան, երբ դրամի տէր կը դառնայ, այն անձը պիտի վարձատրուի Աստուծոյ կողմէ իր հեգութեան եւ խոնարհութեան համար: Ան որ կը կորսնցնէ իր հարստութիւնը, բայց կը շարունակէ պահել իր հաւատքը ապացուցած կ'ըլլայ, թէ իր սիրտը Աստուծոյ կապուած է եւ ո՛չ թէ Աստուծոյ տուածին: Բրիտանացի մարդուն համար իսկական հարստութիւնը Բրիտանու ինքն է: Պօղոս առաքեալ կը վկայէ, թէ «աներեւակայելի գանձ մըն է Բրիտանու» (Եփ. 3.8): Դուն գտա՞ծ ես Բրիտանու սիրտիդ մէջ: Ան հոն է: Սիրտիդ հողին տակ թաղուած անգին ոսկիի նման:

ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Տէ՛ր, իջեցո՛ւր, Սուրբ Հոգիիդ շնորհները իմ վրաս, որ միայնակ եմ պատերազմի մէջ՝ առանց օգնականի: Սրբէ՛, Տէ՛ր, հոգիս տանարը եւ ինձի հետ եղիր երեկոները: Բա՛ց հոգիս աչքերը եւ լուսաւորէ՛ միտքս ու խորհուրդներս: Զօրութիւն տո՛ւր ինձի, Տէ՛ր իմ Յիսուս, եւ ընդունէ՛ օրհնաբանութիւնս: Արթընցո՛ւր զիս գիշերուան խոր քունէն՝ գոհանալու եւ օրհնելու քեզ, որ քունով իմ մեղքերս: Սուգ եւ արտասուք շնորհէ՛ ինձի՝ լալու, սգալու եւ անդադար աղօթելու քու առջեւ:

ԵՐԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵՐԲ ՄԵՂԹԵՐՈՒ ԵԱՆՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶԳԱՍ, ԵՒ ՀՈԳԻԴ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՍԲ ԹԵԹԵԼԱԼՈՒ ԿԸ ՏԵՆՉԱՅ Կարդա՛ Սաղմոս 32
+++++

Երանի՛ անոր, որուն յանցանքները թողութիւն գտան, որուն մեղքերը ներկեցան:

Երանի՛ այն մարդուն, որուն մեղքը Տէրը նկատի չ'առնեք, որուն հոգիին մէջ նենգութիւն չկայ: Որքան ատեն, որ մեղքերս չխոստովանեցայ, ոսկորներս մաշեցան օրն ի բուն աղաղակելէն. գիշեր ցերեկ հարուածներ տեղացուցիր իմ վրաս, Տէ՛ր, եւ իմ ոյժս խամրեցաւ, ամբան տալէն չորցած խոտի պէս: Մեղքս քեզի յայտնեցի, անօրէնութիւնս չյայտնեցի. ըսի՝ «Տիրոջ խոստովանիմ յանցանքներս», եւ դուն ներեցիր մեղքս ու ջնջեցիր պատիժս: Ասոր համար աստուածապաշտ ամէն մարդ աղօթքով պիտի դիմէ քեզի, ամէն անգամ որ անդրադառնայ, թէ մեղքի մէջ կը գտնուի, եւ վիշտերը նոյնիսկ եթէ հեղեղի պէս գինձ ողողեն, բնաւ պիտի չկարենայ մօտենալ իրեն: Դուն ես ապաստանարանս, զիս նեղութենէ գերծ կը պահես, եւ ազատութեան երգերով կը շրջապատես:

«Քեզի պիտի սորվեցնեմ, - կ'ըսէ Տէրը, - ցոյց պիտի տամ, թէ ինչ նամբով պէտք է երթաս, պիտի իրատեմ քեզ, եւ աչքս բու վրադ պիտի ըլլայ:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԸՆԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- *facebook-ի էջ jerak ճրագ թերթ*



ԺԳ. ՏԱՐԻ **ԿԻՐԱԿԻ , 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020** ԹԻԻ 42

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Ես. 20.2-21.6: Գղ. 4.3-18
ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 4.14-24

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 4.14-24

Յիսուս Գալիլիա վերադարձաւ Սուրբ Հոգիին զօրութեամբ եւ ամբողջ գաւառին մէջ իր համբաւը տարածուեցաւ: Անոնց ժողովարաններուն մէջ կ'ուսուցանէր՝ արժանանալով բոլորին հիացումին եւ գովասանքին:

Եկաւ Նազարէթ քաղաքը, ուր մեծցած էր եւ իր սովորութեան համաձայն Շարաք օրը ժողովարան գնաց: Երբ ոտքի ելաւ կարդալու օրուան ընթերցուածը, իրեն տուին Նաայի Մարգարէին գիրքը: Բացաւ եւ գտաւ այն տեղը ուր կ'ըսէր. *«Տիրոջ Հոգին վրաս է. որովհետեւ օծեց զիս եւ դրկեց՝ աղքատներուն փրկութեան աւետիս տալու, սրտաբեկները մխիթարելու, աւետելու՝ թէ գերիները պիտի ազատագրուին, կոյրներուն աչքերը պիտի բացուին, հարստահարուածները պիտի ազատին եւ յայտարարելու, թէ ահա հասած է ժամանակը երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը»:*

Ապա գիրքը գոցեց, տուաւ պաշտօնեային եւ նստաւ: Ժողովարանին մէջ գտնուողներուն բոլորին աչքերը իրեն սեւեռած էին, երբ ըսաւ. *«Այս մարգարէութիւնը, որ դուք լսեցիք՝ ահա այսօր իրականացաւ»:* Ամէնքն ալ տպաւորուած էին իրմէ, եւ հիանալով անոր շնորհալի խօսքերուն վրայ կ'ըսէին. *«Այս մարդը Յովսէփի որդին չէ՞»:*

Յիսուս ըսաւ. *«Անտարակոյս ինձի պիտի ըսէք՝ հետեւեալ առածը: «Բժիշկ, դուն քեզ բժշկէ»:* Եւ պիտի ըսէք. *«Ինչ որ լսեցիմք թէ գործեր եւ Կափառնաումի մէջ, այստեղ՝ բու քաղաքիդ մէջ ալ կատարէ»:* Եւ աւելցուց. *«Բայց դուք ալ գիտէք, որ մարգարէն իր ծննդավայրին մէջ յարգ չունի»:*

«Տիրոջ Հոգին վրաս է. որովհետեւ օծեց զիս եւ դրկեց՝ աղքատներուն փրկութեան աւետիս տալու, սրտաբեկները մխիթարելու, աւետելու՝ թէ գերիները պիտի ազատագրուին, կոյրներուն աչքերը պիտի բացուին, հարստահարուածները պիտի ազատին եւ յայտարարելու, թէ ահա հասած է ժամանակը, երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը»: Ահա Քրիստոսի գալստեան նպատակը, որուն հիմնական առաքելութիւնը մարդուն փրկութիւնն է: Միշտ յիշեմք Տիրոջ այն պատուիրանը, որ կ'ըսէ. *«Արթուն եւ պատրաստ եղէ՛ք»:*

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
20.1 – 21.6

Ասորեստանի Սարգոն քաղաքին հրամանով Տարաթան հրամանատարի Ագոտոս գալեն և պատերազմով գայն գրաւելէն երեք տարիներ առաջ, Տէրը հետեւեալ պատուէրը տուաւ Ամոսի որդի Նսայիին. «Գնա՛ հագուստդ վրայէդ հանէ՛ եւ հողաթափդ ալ՝ ոտներէդ»: Նսայի մարգարէ ըսուածը կատարեց և սկսաւ մերկ ու բոպիկ պտրտիլ: Տէրը այսպէս ըսաւ. «Ահա երեք տարի է, որ իմ ծառաս՝ Նսայի, մերկ ու բոպիկ կը պտրտի: Անկիւս նշան եւ օրինակ պիտի ըլլայ եգիպտացիներուն եւ եթովպացիներուն համար: Թող հասկնան, թէ նիշդ այդպէս Ասորեստանի քաղաքը գերի պիտի տանի եգիպտացիներն ու եթովպացիները, ծեր թէ երիտասարդ, բոլորն ալ մերկ ու բոպիկ, իրենց ամօթոյքն ալ բաց, որպէսզի խայտառակուի եգիպտոսը: Պարտութեան մատնուած եգիպտացիները ամօթ պիտի գգան եթովպացիներուն համար, որոնց վրայ դրած էին իրենց յոյսը, որովհետեւ եթովպացիներն էին եգիպտոսի վրայ իշխողը: Այն օրը փղշտացիները պիտի ըսեն. "Մենք ասոնց օգնութեան ապաւինած էինք, մինչդեռ ասոնք նոյնիսկ իրենք գիրենք չկրցան ազատել Ասորեստանի քաղաքը: մե՞նք ինչպէս պիտի ազատինք"»:

Բարբելոնի վերաբերող պատգամը. «Անապատէն անցնող մրրիկին պէս փոթորիկ մը կու գայ ահա անապատ երկրէն: Ահաւոր է տեսիլքը, եւ ինծի յայտնը աւարտը՝ սարսափելի»:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԸՆԹԵՐՑԵԼ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԷՆ**



**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՎ ՄԱՎԿՆԵՐ
ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՄ
4.3-18**

Որքան ատեն, որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ ղրկեց իր Որդին, որ մարդկային մօրմէ մը ծնաւ և Մովսիսական Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեր օրէնքին գերութենէն փրկէ և Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ ղրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր» կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէք, այլ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

Ճիշդ է, որ նախապէս երբ զԱստուած չէիք քանչևար՝ չաստուածներու կը ծառայէիք: Բայց հիմա, որ զԱստուած քանչևարք եւ մանաւանդ Աստուած ալ ձեզ քանչևար, ի՞նչպէս կրկին կը վերադառնաք բնութեան տկար ու խեղճ ոյժերու պաշտամունքին եւ վերստին կ'ուզէք անոնց ծառայել. յատուկ կարեւորութիւն կու տաք որոշ օրերու եւ ամիսներու, որոշ ժամանակներու կամ տարիներու: Կը վախնամք, որ ձեզի համար տարած ամբողջ աշխատանքս գուր անցած ըլլայ:

Կը խնդրեմ, եղբայրներ, ինծի պէս եղէք, որովհետեւ ես ալ ժամանակ մը ձեզի պէս էի:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԷՆ

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

**ՍՐԲՈՑ ԱՒԵՏԱՐԱՆՉԱՅՆ՝
ՄԱՏԹԷՈՍԻ, ՄԱՐԿՈՍԻ,
ՂՈՒԿԱՍՈՒ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ**

Մատթէոս Աւետարանիչ

Մատթէոս առաքեալ պաշտօնով մաքաւոր, աշակերտներուն մէջ կը ներկայացնէ հրէական ժողովուրդի այլ դասակարգ մը: Մաքաւորները հրէական ընկերութեան մէջ հաշտ աչքով չէին դիտուեր: Անոնք Հոռուական կայսրութեան պաշտօնեաներ էին եւ ժողովուրդին վրայ դրուած տուրքերը կը հաւաքէին, եւ աւելին, շահագործելով իրենց պաշտօնը աւելիով կը գանձէին ժողովուրդէն:

Մատթէոս առաքեալ նաեւ կոչուած է Ղեւի (Մր. 2.14): Ան իր անունը կրող աւետարանով, ուր բազմաթիւ մէջբերումներ կը կատարէ Հին Կտակարանի գիրքերէն, կը փորձէ հրեայ ժողովուրդին փաստել, թէ սպասուած Մեսիան Յիսուսն է:

Կ'ըսուի, թէ Մատթէոս քարոզած է Եթովպիոյ կամ Պարսկաստանի մէջ՝ ուր նահատակուած է:

Մարկոս Աւետարանիչ

Մարկոսի գրած Աւետարանը, բաղդատմամբ միւս աւետարաններուն, համառօտ եւ կարճ ու կտրուկ ոճով գրուած Աւետարան մըն է: Ան հնագոյն աւետարանն է եւ ուղղուած է Հռոմի քրիստոնեաներուն, զՔրիստոս ներկայացնելով բարձր հեղինակութեան եւ իշխանութեան տէր անձ մը՝ Մարդու Որդին:

Մարկոս, որու հրէական անունը Յովհաննէս էր, ընկերակիցը կ'ըլլայ Պողոսի եւ Բառնաբայի, առաքելական առաջին մամբողջութեան ընթացքին եւ սակայն կէս ձգելով առաքելութիւնը կը վերադառնայ Երուսաղէմ: Ապա Բառնաբայի հետ կը մեկնի Կիպրոս եւ աւանդութիւնը կ'ըսէ, թէ ան կ'անցնի Եգիպտոս եւ կը հիմնէ Աղեփսամոսիոյ եկեղեցին:

Մարկոս առաքեալի մայրը նոյնպէս կ'ըլլայ գործունեայ հաւատացեալ քրիստոնեայ մը, որու տունը կը դառնայ քրիստոնեական արարողութիւններ կատարելու աղօթավայր մը:

Ղուկաս Աւետարանիչ

Ղուկաս Աւետարանի եւ Գործք Առաքելոց գիրքի բացայայտ հեղինակը եղած է նոյնիմէ Ղուկաս առաքեալ, որ Պողոս Առաքեալի առաքելական մամբողջութեան ընթացքին ընկերակից եղած է անոր եւ աշխատած անոր հետ քրիստոնեութեան տարածման քարոզչութեան մէջ:

Ղուկաս ուսումով եղած է բժիշկ եւ իր ունեցած իւրաքանչեւ գիտական ծանօթութեամբ, իր գրած գիրքերու մէջ նոյնիսկ կը յիշէ քրիստոսի բժշկած հիւանդութիւններուն անունները եւ գանազան մանրամասնութիւնները, զորս չենք գտներ միւս աւետարաններուն մէջ: Ան աւետարանը գրի կ'առնէ բազմաթիւ ծանօթութիւններ քաղելով Քրիստոսի մասին, նոյնիսկ հարցուփորձելով Աստուածամայր կոյսը, որով կարելի պիտի ըլլայ արձանագրել Քրիստոսի մանկութեան եւ պատանութեան շրջանին կատարուած ղեպքերը: Ղուկասի Աւետարանը ուղղուած է բոլոր նորադարձ քրիստոնեաներուն:

Ղուկասի ծննդավայրին մասին մի քանի կարծիքներ կան, բայց առաւելաբար ընդունուած է, թէ ան Մակեդոնիայի Փիլիպպէ քաղաքէն է եւ հետեւաբար յոյն է: Ան ընկերացած է Պողոսին նոյնիսկ մինչեւ Հռոմ, ուր գրած է իր Աւետարանը եւ ապա Գործք Առաքելոց գիրքը:

Յովհաննէս Աւետարանիչ

Առաքեալներու դասին մէջ ամենէն կրտսեր եւ ամենէն երկար ապրող առաքեալն է Յովհաննէս, որ նաեւ քանչևարուած է Սիրելի Աշակերտ՝ անունով:

Յովհաննէս է իր եղբայրը՝ Յակոբոս, Քրիստոսիկողմէ կը կանչուի, երբ ձկնորսութեամբ կը զբաղէին: Ան Քրիստոսի եռամեայ առաքելութեան ընթացքին ամենասիրելի անձը կ'ըլլայ Տիրոջ եւ նոյնիսկ երբ մատնութեան ժամանակ միւս աշակերտները վախճալով կը լքեն զՔրիստոս եւ կը փախչին, Յովհաննէս կը հետեւի Անոր հասնելով մինչեւ Գողգոթա, ուր իր սիրուն առ ի գնահատանք, Յիսուս Մարիամ Աստուածածին կոյսը կը յանձնէ Յովհաննէսի ինամբիւն եւ այդպիսով կ'աւանդէ իր հոգին:

Յովհաննէս առաքեալ նաեւ ծանօթ է իր անունը կրող սքանչելի աւետարանով՝ Աւետարան Ըստ Յովհաննու: Ան իր առաքելութիւնը կը շարունակէ Եփեսոսի մէջ եւ ապա աքտրեալ կը տարուի Պաթմոս կղզի, ուր կ'ունենայ իր յայտնութիւնները, որոնք ամփոփուած են Յայտնութիւն Յովհաննու գիրքին մէջ: Ունի նաեւ երկու ընդհանրական նամակներ, ուր կը խօսի կեղծ վարդապետութիւններէն զգուշանալու մասին եւ կը թելադրէ կեանքը ապրիլ նշմարտութեամբ ու սիրով:

Յովհաննէս առաքեալ բնական մահով կը մեռնի 95 տարեկանին, շուրջ Քրիստոսի 100 թուականին: